ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 438 – Ա    30 հոկտեմբերի 2020 թ.

# ՀԱԿՈԲ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ԶՈՐԱԿՈՉՎԱԾ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Աշխատանքային օրենսգրքի 124-րդ հոդվածի, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ու 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 27-ի N 1586-Ն որոշումն, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Գեղարքունիքի մարզի տարածքային ստորաբաժանման Գավառի բաժանմունքի պետ Վանիկ Գոզեյանի կողմից տրամադրված տեղեկանքը

1. 2020 թվականի հոկտեմբերի 20-ից Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Գավառի պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության բուժական գծով տնօրենի տեղակալ Հակոբ Հովսեփյանին համարել զորակոչված՝ ժամանակավորապես ազատելով ծառայողական (աշխատանքային) պարտականությունների կատարումից:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Գավառի պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝ աշխատանքային պարտականությունների կատարումից ազատված ժամանակահատվածի համար սահմանված կարգով ապահովել Հակոբ Հովսեփյանի աշխատավարձի վճարումը:

30.10.2020

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SANOSYAN GNEL 1710830069

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

ք. Գավառ